




Ուլունքաշար

Օրագրավորել կամ կանխել հղիությունը բնական ճանապարհով:

Ի՞նչ է Ուլունքաշարը:


- ◆ Ուլունքաշարը գունավոր ուլունքների շարան է:
- ◆ Ուլունքաշարի գույներն օգնում են ձեզ իմանալ հղիանալու հավանական օրերը:
- ◆ Դրանք նույնպես օգնում են ձեզ իմանալ չհղիանալու հավանական օրերը:
- ◆ Հղիանալուց խուսափելու համար մի ունեցեք սեռական հարաբերություն կամ օգտագործեք պահպանակ այն օրերին, երբ հավանական է հղիությունը:



Ուլունքաշարը հիմնված է ընտանիքի պլանավորման բնական մեթոդի վրա, որը 95%-ով արդյունավետ է ճիշտ օգտագործման դեպքում: Սա նշանակում է, որ 100 կանանցից միայն 5-ը կարող են հղիանալ այս մեթոդի ճիշտ օգտագործման դեպքում:

Ուլունքաշարը և դաշտանի ցիկլը


- ◆ Ուլունքաշարը համապատասխանում է կնոջ դաշտանի ցիկլին:
- ◆ Յուրաքանչյուր ուլունք ցիկլի մեկ օրն է:



Ձեր դաշտանի ցիկլը նույն բանը չէ, ինչ ձեր դաշտանի օրերը: Ձեր դաշտանի օրերը նրանք են, երբ դաշտանի արյունահոսություն եր ունենում: Իսկ ձեր ցիկլը ներառում է բոլոր օրերը՝ սկսած դաշտանի սկսվելու առաջին օրից մինչև հաջորդ դաշտանի նախորդ օրը:


Ի՞նչ են նշանակում գույները:

Ուլունքաշարը բաղկացած է 32 ուլունքների շարանից, ռետինե օղակից և սլաքով զլանից:




Ո՞վ կարող է օգտագործել Ուլունքաշարը հղիանալուց խուսափելու համար:

- ◆ Կանայք, ում դաշտանը մոտավորապես ամիսը մեկ է սկսվում:



- ◆ Այն գույքերը, ովքեր ազատ են շփվում միմյանց հետ և համաձայնվում են չունենալ սեռական հարաբերություն կամ օգտագործել պահպանակ այն օրերին, երբ հավանական է կնոջ հղիանալը:




Ուլունքաշար

- ◆ Ուլունքաշարը չի պաշտպանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ից կամ սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակներից:
- ◆ Ուլունքաշարը խաղալիք չէ: Պահեք այն ապահով վայրում՝ երեխաներից հեռու:

ԱՄՆ արտոնագիր N 6.747.917 B2: Արտերկրյա արտոնագրերը բնության ընթացքում են: Պատրաստված է Cycle Technologies, Inc. Washington DC, 20015. Բազմացվել է համաձայն լիցենզիայի:

Ինչպե՞ս օգտագործել Ուլունքաշարը:


1. Ձեր դաշտանի սկսվելու օրը տեղաշարժեք օղակը դեպի ԿԱՐՄԻՐ ուլունքը:



2. Նույնպես նշեք այդ օրը ձեր օրացույցում:




3. Տեղաշարժեք օղակը օրական մեկ ուլունքով: Տեղաշարժեք այն նույնիսկ այն օրերին, երբ դուք դաշտան եք ունենում:




4. Առանց պաշտպանվելու սեռական հարաբերություն մի ունեցեք, երբ օղակը որևէ ՍՊԻՏԱԿ ուլունքի վրա է: Դուք կարող եք հղիանալ այդ օրերին:



5. Կարող եք սեռական հարաբերություն ունենալ, երբ օղակը որևէ ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ ուլունքի վրա է: Հավանական է, որ դուք չեք հղիանալ այդ օրերին:



6. Կրկին տեղաշարժեք օղակը ԿԱՐՄԻՐ ուլունքի վրա, երբ ձեր հաջորդ դաշտանը սկսվում է: Բաց թողեք մնացած բոլոր ուլունքները:



Ի՞նչ անել, եթե մոռացել եք տեղաշարժել օղակը:


Կարևոր է հիշել օղակը տեղաշարժելու մասին ամեն օր: Եթե մոռացել եք տեղաշարժել օղակը, հետևեք այս ցուցումներին:

Մտուցեք ձեր օրացույցով ձեր վերջին դաշտանի սկսվելու ամսաթիվը:



Սկսած այդ օրից՝ հաշվեք անցած օրերի թիվը՝ ներառյալ այսօրը:

Այնուհետև, սկսելով կարմիր ուլունքից, հաշվեք ուլունքների նույն թիվը և տեղադրեք օղակը այսօրվա ուլունքների վրա:




Երբ է պետք խորհրդակցել ձեր բժշկի հետ.

- ◆ Եթե առանց պաշտպանվելու սեռական հարաբերություն եք ունեցել ՍՊԻՏԱԿ ուլունքի օրը, դիմեք ձեր բժշկին:



- ◆ Եթե մտածում եք, որ գուցե հղիացել եք, քանի որ ձեր դաշտանը չի սկսվում, դիմեք ձեր բժշկին:

- ◆ Եթե ձեր դաշտանը սկսվել է նախքան ՍՊԻՏԱԿ ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ ուլունքին հասնելը, նշանակում է, ձեր ցիկլը 26 օրից կարճ է: Դիմեք ձեր բժշկին:



- ◆ Եթե ձեր դաշտանը չի սկսվում վերջին շագանակագույն ուլունքին հասնելու ՕՐԻՑ ՀԵՏՈ, նշանակում է, ձեր ցիկլը 32 օրից ավել է: Դիմեք ձեր բժշկին:




Եթե տարեկան մեկ անգամից ավել ձեր ցիկլը կարճ է 26 օրից կամ երկար է 32 օրից, Ուլունքաշարը ՉԻ գործի ձեզ համար:

Հնարավոր է, դուք պետք է սպասեք որոշ ժամանակ, մինչև Ուլունքաշարն օգտագործելը.

- ◆ Եթե դուք վերջերս եք երեխա ունեցել կամ կերակրում եք կրծքով, գրուցեք ձեր բժշկի հետ, նախքան Ուլունքաշարն օգտագործելը:



- ◆ Եթե վերջերս օգտագործել եք ընտանիքի պլանավորման այլ մեթոդ, գրուցեք ձեր բժշկի հետ, նախքան Ուլունքաշարն օգտագործելը:



Երեխա ունենալուց հետո գույգերը պետք է օգտագործեն իրենց նախընտրած մեթոդն առնվազն 2 տարի՝ նախքան հղիանալը:

Հիշեք.

Որպեսզի Ուլունքաշարը գործի ձեզ համար.

- ☒ Ձեր դաշտանի ցիկլը միշտ պետք է լինի 26-ից 32 օրվա միջև: Եթե տարեկան մեկ անգամից ավել ձեր ցիկլը կարճ է 26 օրից կամ երկար է 32 օրից, Ուլունքաշարը ՉԻ գործի ձեզ համար:
- ☒ Սկսեք օգտագործել Ուլունքաշարը դաշտանը սկսվելու առաջին օրից:
- ☒ Տեղաշարժեք օղակն ամեն օր:
- ☒ Առանց պաշտպանվելու սեռական հարաբերություն մի ունեցեք ՍՊԻՏԱԿ ուլունքների օրերին: